№ 96 Մայիսի 29 (Յունիսի 10) 1881 Մայիսի 29 (Յունիսի 10) № 96

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԻՆՉ է յայտնվում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ս. Պետերբուրգից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միացեալ ընկերութիւնք հայոց. Գերմանիա. Սպանիա. Թիւրքիա.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նախ հաւաքել յետոյ բաժանել.

ԻՆՉ Է ՅԱՅՏՆՎՈՒՄ

Ընթերցողը յիշում է որ մենք շատ անգամ „Մշակի" մէջ այն միտքն էինք յայտնում, որ Թիւրքաց Հայաստանի դրութիւնը քննելուն, հայոց խնդիրը լուծելուն շատ կը նպաստէր մի լրագիր, կամ մի ամսագիր, որ հիմնվէր Թիւրքիայից դուրս օտար մի երկրի մէջ և հրատարակվէր օտար լեզուով: Այդ տեսակ գործի համար մենք ինքներս, մինչև անգամ, առաջարկած էինք մեր թոյլ ոյժերը. բայց մենք ոչ մի տեղից օգնութիւն և քաջալերութիւն չը ստացանք այդ միտքը իրագործելու համար:

Մի և նոյն ժամանակ Կ. Պոլսի հայերը, մանաւանդ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը ընտրած լինելով իրանց համար դիւանագիտական ճանապարհը հայոց խնդիրը լուծելու համար, ոչինչ արձագանք չը տուեցին մեր յարուցած մտքին: Մենք այդ անտարբերութիւնը դրանով էինք բացատրում, որ Կ. Պոլսի ինտելիգենցիան շատ մեծ հաւատ չէ ընծայում մեր ոյժերին, բայց պատրաստ կը լինէր այդ մտքի իրագործելուն նպաստել, եթէ մեզանից աւելի մեծ հեղինակութիւն ունեցող մի անձ առաջարկէր իր ծառայութիւնները Եւրոպայում Ֆրանսերէն, գերմաներէն, կամ անգլիերէն լեզուով մի հայոց օրգան հրատարակելու:

Բայց ի՞նչ է յայտնվում այժմ. մեր փարիզի թղթակիցը հաղորդում է մեզ որ հայոց ազգի մէջ մեծ հեղինակութիւն ունեցող մի անձ, փարիզի պրոֆէսօր պ. Դիւլօրիէ արդէն վաղուց է որ ունեցել է դիտաւորութիւն փարիզում հայոց օրգան հրատարակելու և այդ մասին դիմել է Կ. Պոլսի հայոց ազգային ժողովին, ոչ թէ նիւթական նպաստ խնդրելով հայերից, այլ միայն օգնութիւն հայոց ազգի կողմից 200 բաժանորդ իր թերթի համար գտնելու...

Եւ այդ առաջարկութիւնը Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը մերժել է, այն ինչ նրան շատ հեշտ կը լինէր իր հեղինակութեամբ յորդորել Թիւրքաց մայրաքաղաքի մի երկու, երեք հարիւր ազգայիներին գրվել պ. Դիւլօրիէի հրատարակութեանը:

Ահա ուրեմն ազգասիրութիւն, հայրենիք, հայոց խնդիր, դիւանագիտական ճանապարհ բղաւողներ.... Ամեն բան խօսք է միայն Կ. Պոլսի հայերի մէջ, բայց գործ,—ոչինչ:

Մի յարգելի անձն, հայկաբանութեան մէջ մեծ հեղինակութիւն ունեցող մի մարդ, առաջարկում է անել այն ինչ որ չեն կարողացել անել՝ ոչ Մխիթարեանները, ոչ էլ ամբողջ Կ. Պոլիս իր ինքնահաւան անթիւ հանձարներով,—և դարձեալ նրան մերժում են ամենաչնչին օգնութիւն....

Ուրեմն այն երևելի դիւանագիտական ճանապարհն էլ դարդակ խօսք է եղել.... Այդ տեսակ դառն փորձերից յետոյ մենք աւելի և աւելի ենք համոզվում որ պօլսեցիներից Թիւրքաց հայերը սպասելու ոչինչ չունեն:

Մենք մեր կողմից համարձակվում ենք դիմել պ. Դիւլօրիէին, խնդրելով նրան որ չը հրաժարվի իր գեղեցիկ և օգտաւէտ մտքից: Ռուսաց հայերի մէջ անպատճառ կը գտնվեն 200 բաժանորդ նրա հրատարակութեան համար: Մենք պատրաստ ենք գրել մասնաւոր նամակ Ֆրանսիացի դիտակներին և առաջարկել նրան որ ուղարկի մեզ իր ձեռնարկած հրատարակութեան համար ստորագրութեան թերթը:

Մենք կարծում ենք որ չենք սխալվի եթէ ասենք, որ ռուսաց հայերը աւելի հակամիտ են նպաստել ամեն տեսակ օգտաւէտ ազգային ձեռնարկութիւններին, քան թէ Թիւրքիայի հայերը, որ մեր միջից մի մարդ աւելի կարող է անել քան թէ դարդակախօսներից բաղկացած Կ. Պոլսի ամբողջ ազգային ժողովը:

Ահա ուրեմն ինչ բաներ են յայտնվում... Աւելի և աւելի ենք սկսում հասկանալ թէ ինչ դարդակ բան է եղել Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը:

Եւ դեռ գտնվեցան մարդիկ, որոնք իրանց վիրաւորված էին ցոյց տալիս, մեզ համբակ էին անուանում, երբ մի քանի տարի սրանից առաջ մենք համարձակվեցանք Կ. Պոլսի ազգային ժողովը՝ իդիոտներից բաղկացած մի ժողով անուանել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Մայիսի 19-ին

Հակասեմիտական վիճաբանութեան ծագած օրից սկսեալ՝ ես մեծ համակրութեամբ էի «Մշակ» և «Մեղու» լրագրաց մէջ զետում երկուց կողմանց առաջ մատուցած փաստերը, և աւելի մեծ հետաքրքրութեամբ ուսումնասիրում նրանց օրըստօրէ մեծ չրջանակ գրաւելը, մանաւանդ երբ ի մի զանգուած էին ձուլվում առևտրական նախանձընդդիմութեան արգասիքը՝ կրօնական մոլեռանդութեան հետ, և քաղաքական խնդիրներն դառնում էին կղերական զօչաքաղութեան խաչեր:

Թէ այս չարժումների լուրքն իմ մտքի մէջ ինչ տպաւորութիւններ էին գործում, կարէք առանձին խմաստասիրել, որ երբ «Մշակի» 83 համարում այսօր կարդացի Բաումգարտէն բողոքական քահանայի բրօշիւրի միջից քաղած վարդապետութեան իմաստն, համարեցայ՝ թէ այն քահանայն իմ ծածուկ խոստովանութիւնս է հրատարակել:

Եւ արդարև, ինչ քրիստոնեայ է այն քրիստոնեան, որ քրիստոնէութիւնն կամ քրիստոնէական գաղափարներն ապահովելոյ համար, կարծում է՝ թէ անչուշտ հարկաւոր է պետական իշխանութեան օգնութեան դիմելն:

Զքնաղ և պանծալի են այն աստուածաբան քահանայի նրբազնին հայեցուածքն: Միթէ կայ ուրեք ս. աւետարանի մէջ Յիսուսի պատուիրանաց ակնարկ՝ մատնութիւն և բռնութիւն գործ դնել՝ քրիստոնէութեան համար: Միթէ քրիստոնէական կրօնն կարօտ է աշխարհական իշխանութեան օգնութեան: Միթէ այս՝ այն կրօնն չէ, որոյ մասին խօսեցաւ անսուտ բերանն Քրիստոսի՝ թէ «դրունք դժոխոց դդա մի յաղթահարեսցեն:» Միթէ Պրիսոսի օրից՝ հրէական աշխարհանայեցողութիւնն նուաղել է երբէք, և ուր և երբ է սպառնացել վտանգ քրիստոնէութեան:

Թող հրէից կարծիքն մի կողմ մնայ. ինչ կարծիք պիտի յղանայ բովանդակ աշխարհ, քրիստոնէութեան աղագաւ, երբ որ նրա պաշտօնեայք ոչ թէ միայն նոր պաշտպանի դերն են զգենում ձախողակի, այլ և իրանց անձն՝ դեռ ևս պատերազմի պայքարան չը մտած՝ յաղթուած են խոստովանում:

Փորձից գիտենք, որ և անտեսական հարցը մեր լրագրութեան մէջ իր լուծումը չի ստանայ. այդ համոզմունքը մենք գանգատի և վհատութեան աղբիւր չենք շինում: Շատ մեծ միամտութիւն է հարկաւոր, որպէս նաև ադիտութիւն, կարծելու համար թէ այդպիսի հարցերի լուծումը, այսինքն նրանց գործնական իրագործութիւնը կարող են մի տարում կամ տասը տարում ստանալ. Բայց և այնպէս այդ հարցը, որպէս նրա նախորդները, այն մեծ օգուտը կը տայ, որ մեր հասարակութեան աչքերը գտնէ մի քանի ժամանակ այդ մեծ և կարևոր առարկայի վրա դարձրած կը լինեն, որպէս նաև յետոյ հետազօտութիւնների համար գտնէ մի սկիզբ դրած կը լինի: Ասում ենք սկիզբ, ոչ թէ հիմք, որովհետև հիմք դնելու համար հարկաւոր են միանգամայն այլ տեղեկութիւններ, քան թէ, կը համարձակվենք ասել, մի հայ մարդ այս բոպէին կարող է ունենալ հայկական անտեսութեան հանգամանքների վերաբերեալ: Այս կէտի վրա պիտի ուշադրութիւն դարձրած, որովհետև պիտի գուշակել, որ գաղափարից յափշտակված, գուցէ մօտ ժամանակներում շատերը կը շտապեն յեղյեղել լրագիրների սիւները առաջարկութիւններով, ցանկութիւններով, դատողութիւններով և այլն:

Բայց եթէ զգուշութեան հրաւէր ենք կարդում մեր հայրենակիցներին, դրա նպատակը չափազանց զգուշութիւնից գործը խանգարել չէ, այլ ընդհակառակը՝ գործը առաջացնել: Մենք կը մեկնենք մեր միտքը հետևեալով:

Առանց դրական տեղեկութիւնների, որպէս պ. Գ. Նիկողոսեանցին է, անտեսական բարեբաղդման

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽ ՀԱՒԱՔԵԼ, ՅԵՏՈՅ ԲԱԺԱՆԵԼ

—

Ինչ նշաններ կան, որոնցով կարելի լինէր դատել, թէ մի ազգ պատմականապէս ապրում է: Պատմականապէս մեռած է մի ազգ իր անդորրութեան մէջ. անդորրութեան հետևանքը մեռելութիւն լինելով, իսկ կեանքի պայմանը և նշանը—չարժողութիւն,—ով անդորր է—նա և կեանքից զուրկ է, անընդունակ գործեր առաջացնելու, որոնք արժանի լինեն պատմական արձանագրութեան: Բարեբաղդաբար, մեր ազգային չրջանների մէջ երևոյթներ պակաս չեն, որոնք կարողանային համոզնել զիտողութեան համար պատրաստի աչքեր ունեցողին, որ մեր ազգը կենդանութեան եռման մէջ է: Ցարուցտարի մենք տեսնում ենք մեր հասարակութիւնը զանազան հարցերով զբաղված՝ մի ժամանակ, այդ ուսումնարանական հարցն է, միւս տարի, այդ եկեղեցական և կղերականութեան խնդիրն է, միւս տնգամ ևս, այդ Թիւրքաց Հայաստանի քաղաքական վիճակի հարցն է, չորրորդ անգամ՝ կրօնական վիճաբանութիւններ են և այլն, և ահա վերջապէս հերթը կարծես ուզում է հասնել—ինչին—տնտեսական հարցին: Իրաւ, այն բոլոր վերև յիշած հարցերը վերջնականապէս չը քննուեցան և չը վճռվեցան, իրաւ, նրանց մասին դեռ շատ ասելու բաներ կան մնացած, լուսաբանելու դեռ որքան կարօտութիւն ունեն այն խնդիրները: Ով այս հանգամանքից, որպէս գուցէ շատերը տրամադրված կարող են լինել, ցանկանայ այդ ամբողջ գործունէութեան ապարդիւնութեան հետևանքը դուրս բերել,—նա դորանով ցոյց կը տայ միայն մի բան. նա ցոյց կը տայ թէ որ աստիճանի կիսակատար գաղափար ունէ ազգային կեանքի վրա մի կողմից, և լրագրութեան ու գրականութեան և դորա հետ հասարակաց կարծիքի հետ միւս կողմից:—Իրաւ է, նոյն և քաղաքիւ այլ հացցեր դեռ կրկին կը ծնվին, կրկին կեռուին, նրանք կը դառնան աւելի խորը և մանրամաս հետազօտութիւնների առարկաներ մեր նոր և ապագայ, գիտութեան զէնքերով զինուած, երիտասարդութեան համար: Բայց և այնպէս, եթէ այդ հարցերը, այնպէս որպէս սրանք լոյս երևացին, հասարակութեան ուշադրութիւնը գրաւելու և զբաղելու ներքին ոյժը ցոյց տալ կարողացան,—դա մի նշան է, որ մեղանում յայտնի բաների համար կարօտութիւն է զգացվում, իսկ երբեմն աւելի քան կարօտութիւն—քաղց ու ծարաւ...

Բերկրալի երևոյթ, որը արժանի է արձանագրութեան մեր պատմական յիշատակարանների մէջ: Հարիւրաւոր տարիներ անցան, մեր ողորմելի հայ երիտասարդութիւնը, ինքն ըստ ինքեան կայտառ, բնական ձիրքերից անզուրկ և բանասէր հայ երիտասարդութիւնը, բեռնված պապական անմարսելի, անմիտ ու ապարդիւն խնդիրներով, փչացնում էր իր մտաւոր ոյժերը առանց մի որ և իցէ ելքի, առանց մի հնար գտնելու դուրս գալ վերջապէս նախնեաց նեղ և սահմանափակ չրջանակներից...

Մեր նախնի ոյժերը փչացան. և որոնք են նրանց մտաւոր գանձի և ազգային կեանքի յիշելու արժանի հետանքները. որոնք են և ուր են այդ գանձարանները, մտաւոր չուտմարանները մեր աւելի քան հաղարամեայ անցեալի երիտասարդութեան: Եւ կամ, որը աւելի նշանաւորն է, որոնք են այդ մտաւոր կեանքի և հաղարամեայ կրթութեան գործնական հետևանքները: Արդիւնքներ... և այն գործնական արդիւնքներ. օհ, այդ մի ծիծաղ է ամբողջ սերունդների դիմաց: Բայց ոչ,—մենք սխալվում ենք: Արդիւնքները անհամար են, հարկաւոր է միայն աչք տեսնելու համար: Նայէք մեր հասարակութիւնը, նայէք մեր հայրենեաց հողը. երկուքն էլ իրար հետ կը մրցեն իրանց վիճակով: Որպէս համազուգութիւն, որպէս համերաչխութիւն... Հասարակութիւնը վերին աստիճանի ցածրութեան մէջ, ուր անբարոյականութեան բոլոր գարշելութիւնները ազգային բարօրութեան սկզբմունքներ, իմաստութեան և խելացի կենցաղավարութեան պայմաններ են շինված, հայրենիքը, հայրենեաց հողը, ամեն ազգութեան արմատը, այդ հողը անհոգութեան՝ զզուանքի և կատաղի արհամարհութեան զոհ դառած:

Այժմ պիտի ցոյց տուած, որ հողը ոչ թէ միայն մի առարկայ է, մի անշունչ առարկայ, որը միայն գիւղացուն հարկաւոր է և պիտանի, այլ թէ այդ նոյն հողը մի և նոյն ժամանակ մի գաղափար է և այն՝ մի մեծ գաղափար, որը նոյնքան թանկագին է և սուրբ, որպէս ազգայնութեան գաղափարը ինքը:

Ահա ինչու մենք չենք կարող զսպել մեր ներքին հրճուանքը բարեբաղդ տնտեսական հարցի ծնունդը մեր լրագրութեան մէջ:

Փորձից գիտենք, որ և տնտեսական հարցը մեր լրագրութեան մէջ իր լուծումը չի ստանայ. այդ համոզմունքը մենք գանգատի և վհատութեան աղբիւր չենք շինում: Շատ մեծ միամտութիւն է հարկաւոր, որպէս նաև ադիտութիւն, կարծելու համար թէ այդպիսի հարցերի լուծումը, այսինքն նրանց գործնական իրագործութիւնը կարող են մի տարում կամ տասը տարում ստանալ. Բայց և այնպէս այդ հարցը, որպէս նրա նախորդները, այն մեծ օգուտը կը տայ, որ մեր հասարակութեան աչքերը գտնէ մի քանի ժամանակ այդ մեծ և կարևոր առարկայի վրա դարձրած կը լինեն, որպէս նաև յետոյ հետազօտութիւնների համար գտնէ մի սկիզբ դրած կը լինի: Ասում ենք սկիզբ, ոչ թէ հիմք, որովհետև հիմք դնելու համար հարկաւոր են միանգամայն այլ տեղեկութիւններ, քան թէ, կը համարձակվենք ասել, մի հայ մարդ այս բոպէին կարող է ունենալ հայկական անտեսութեան հանգամանքների վերաբերեալ: Այս կէտի վրա պիտի ուշադրութիւն դարձրած, որովհետև պիտի գուշակել, որ գաղափարից յափշտակված, գուցէ մօտ ժամանակներում շատերը կը շտապեն յեղյեղել լրագիրների սիւները առաջարկութիւններով, ցանկութիւններով, դատողութիւններով և այլն:

Բայց եթէ զգուշութեան հրաւէր ենք կարդում մեր հայրենակիցներին, դրա նպատակը չափազանց զգուշութիւնից գործը խանգարել չէ, այլ ընդհակառակը՝ գործը առաջացնել: Մենք կը մեկնենք մեր միտքը հետևեալով:

Առանց դրական տեղեկութիւնների, որպէս պ. Գ. Նիկողոսեանցին է, անտեսական բարեբաղդման

Սխալ չէ այն ողջամիտ Աստուածաբան հեղինակը, որ ամօթալի դրոշմ է կոչել այդ չարժումը, Գերմանիայի համար. սխալն այն է, որ միայն Գերմանիային է ընձեռել այդ կնիքը։

Գաբրիէլ աւագ քահ. Պատկանեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 27 մայիսի

Դրօշաղարդ սիւնակների մի շարք և նոցա մէջ գոյնզգոյն լապտերների մի տողան գրաւում էին անցդարձուորի ուշքը դէպի Թատրոն։ Սրա մուտքի հանդէպ մի կամարաձև թեթև շրջանակի, քնարակերպ նկարուած դափնեայ քօլոլի մէջ, վարդագոյն լոյսն ետեից առնելով, փայլում էին «Հայոց Թատրոն» վերնագրութիւնն և նրա պարոնակի տակ երկու գլխատառ «Պ. Ա.», և ապա ստորև պարզապէս գրուած—Պ. Ադամեանին, և յետոյ թուականը—1881, մայիսի 25։ Մանրամասնութիւններ ճչաիւ միտս չեն։

Խաղը լինելու էր Համլէտ։

Համլէտ և Ադամեան հրապոյր էին ժողովրդի համար. այդ խայծը զօրութիւն ունէր թէ հային թէ օտարին կարթելու. Թատրոնը պարպատուելու չափ լցուած էր, կարող էր իւր պատեր մի սաժենաչափ յետ մղել՝ առանց «տեղ լէնցաւ» ասելու։

Լաւ դերասան, ընտիր խաղ.— լի՛ էլ Թատրոն։

Թէև լաւ դերասան, բայց չը գիտես անյայտութեան որ անկիւնէն դուրս պրծած մի «Քամօ Մինար» խաղ,—դատարկ էլ Թատրոն։

Այդպէս է, անհոգութեան վարձատրութիւն՝—անտարբերութիւն։

Ադամեան, նոյն իսկ անհայագէտ օտարների խոստովանութեամբ, զարմանալի լաւ էր իւր դերում, և իբրև դերասան, մեծ մագնիս ունի։ Ծափահարութեան աստիճանը եռացման 80⁰-ին հասած էր։

Խաղն ընդհանրապէս բաւարար էր։ Նորաս դերասաններին պէտք է յիշեցնել, որ երբէք չը մոռանան հոգեկան որ և է յուզմունք կենդանի պահել իրենց դէմքի վրա. թէ ոչ, տեսնում ես, երբ չեն խօսում՝ արձանի պէս սառն և անգործ են. և յետոյ, երբ չարձեալ սկսում են խօսիլ, նոր աշխատում են կենդանանալ։ Դերասանի ուշքը միշտ վրէն պէտք է լինի. յանկարծ, ընկերի խօսած միջոցին, մոռանալ այն անձն ու կիրքեր, որոնց ներկայացուցիչն է ինքն, և ընկնիլ մտաթարթափութեան և ո գիտէ ինչ երգի կամ ապշութեան մէջ, և ապա յուշարարի ազդով ցնցուիլ զարթնիլ, այդ, ինչպէս շատ անգամ, նոյնպէս և երէկուայ խաղում աչքի էր զարկում։

Բայց, դերասանին առաջնորդելու համար, աւելի ազդու ինչ խրատ կարող է լինել քան այն, որ ինքը մեծահամբաւ վարդապետը, Շէքսպիրը, տալիս է նրան Համլէտի բերնով։ Թող բեմի նորընծաները լաւ սերտեն այն տողեր և նրանց իմաստին համեմատ թեքեն իրենց ուժեր։

Կէս գիշերն անց՝ աւարտուեցաւ ներկայացումն։ Դերասանին տալն մի մեծ պսակ. բեմին կից վերի երկու օթեակներէն եկ պսակներ իջան. յատկապէս Պ. Զիթախեանի օթեակէն ներքև թռչող երկրորդ պսակի ժապաւէնը իւր հետ մի ծրար իջուց, ուր, ասում էին, մի հատ յիսնոց կար թաղնուած. լուրն այդ յիսնոցը մինչ 300 մանէթի արժողութեան հանեց. ուղիղն առնողին ու տուողին է յայտնի։ Մի ուրիշ ծրար էլ ընծայուեցաւ դերասանին, ուր ամփոփուած է եղել, առ ձեռն ժողովուած դրամ, 260 մանէթ։ Թատրոնի դրամարդիւնքն եղել է, ասում են, 807 մանէթ, թող տեղերի համար սրա նրա կողմից տրուած աւելին։ Այնպէս որ դերասանը իւր բաղդէն գանգատելիք չունի, և ոչ իւր շնորհքէն թերահաւատելիք, և ոչ, մանաւանդ, հասարակութեան ճանաչողութենէն կասկածելու տեղիք։

Թատրոնէն վերադարձը աղմկալի էր. հետաքրքիր ամբոխը դիզուում էր Թատրոնի առջև, կառք և մարդ խառն յուզուում էին անցքի վրա, ճրագների և արուեստական լոյսերի շառաղոյն բոցի մէջ ծփում էին պատանիներ կրելով քնարաձև լապտերներ, որոնց վրա դերասանի հանդիսացուցած խաղերն էին գրուած։ Վերջապէս երբ սա դուրս եկաւ և ելաւ իւր համար պատրաստուած կառքի մէջ, կեցցէների և ծափերի ձայնով թնդաց օդը երկոյն բոպէներով. կառքի մէջ և շուրջը դիզուած էին յիշեալ քնարաձև ու լուսավառ լապտերներ, որոնց կարմրագոյն բոցով վառվռում էին վաստակուած դափնի պսակներն ու թիկունքը կառապանի նստարանին տուած՝ կանգուն կեցած դերասանի երեսն։ Այդ դրութեան մէջ, զըլխաբաց, կարմրագոյնած կերպարանքով, փար փռուն աչքերով և գանգուրն հողմին տուած, մեր դերասանը, մի հանդիսական տիկնոջ կարծիքով, Որփէոսին էր նման, դժոխքում։

Կառքն, այդպէս ջահաղարդ, մանաւանդ թէ գիշերուայ խոր մթին մէջ իբրև կրակի գնդանն դէզ, շուրջ պատուած աւելի մանրիկ և աղմկաղոչ ամբոխէ, տարաւ իջուց դերասանին իւր ըռան առջև։ Որոտալից ձայներէն՝ քնախառն դուրս էին թռել խրճիթների միամիտ կանայք և իրար մէջ ասում էին թէ գողեր են եկել. ոմանք նոցանից, աւելի դատող, ուղղում էին առաջինները ասելով—այդ գողերի բան չէ։ Վերջապէս դերասանն ամանց դրկախառն ողջունելով և այդ ողջոյնն ու շնորհակալիք նաև միւսներին հաղորդել խնդրելով, խումբը, լապտերներն հանդցնելով, ցրուեցաւ գնաց։ Ժամը մէկկէսն անց էր։

Ի՞նչքան տարբեր էր այդ երեկոն միւսէն։ Պ. Մնակեանի, այդ իւր դերերում ոչ նուազ քանքարաւոր և շնորհալի դերասանի կառքը, մթութեան ծոցում, անհնար գլորուեցաւ դնաց միւս կառքերի խառնուրդում։ Ո՞ւմն է մեղը։ Ինձ չի թվում թէ կուսակցական ոգուն. աւելի հաւանական է թէ Քամօ-Մինարներին և ընկերութեան, որոնք չը գիտեմ ինչ դրդմամբ հեծնում են պատուական դերասանի շալակը, նորա երեկոներին։

Ոմանց թւում է թէ այդ ցոյցերը, աւելի մանրիկ հասարակութեան կողմանէ լինելով, այնքան կշիռ չունին և ծիծաղելի են։ Ինձ աւելի ուղիղ է երևում ասելը, թէ նրանք աւելի կշիռ ունին, որովհետև մանրիկ հասարակութեան կողմանէ են։ Լաւագոյն էր որ դերասանուհիների երեկոներին մեծդի ու մօրուեղ հասարակութիւնն աւելի համեստ ու ծանրաբարոյ հանդիսանար։

Գաղափարապաշտ՝—աւելի մանրիկ հասարակութիւնն է Թիֆլիսում, այդ նործաղիկ սերունդը, ուսման դռներում դեգերուող մանկտին, որոնք արդարև բուռն սիրով ու վառ երևակայութեամբ սիրում ու պաշտում են Շէքսպիրին ու Շիլլերին, Աւազակներ ու Համլէտ ստեղծագործողներին։ Ուրեմն բնական և գովելի երևոյթ է, հայերիս համար մանաւանդ խիստ բերկրալի, որ երէկ կորած և այսօր ինքնիրան գտած ու մեզ համար գտնուած այդ թարմ ուժը, եռանդուն ոգի ու սիրտ ունեցող մանկութիւնը, ովսանա աղաղակելով վազում է Ֆրանց-Մօոր և Համլէտ ներկայացնող հայ արուեստագէտի կառքի ետևէն։

Դոցա ցոյցեր, կրկնում եմ, ծանր կշիռ ունին։ Զօրութիւն և եռապատիկ աւելի շնորհք դերասաններին, որ այդ բողբոջ մանուկների սէրն, առ հայ բեմ, կարողանան միշտ վառ պահել։ Բեմի վրա աւելի Շէքսպիր, աւելի Շիլլեր ու նրանց նմաններ, ապնիւ ու ընկերօգուտ դաղափարների սերմանողներ, աւելորդը՝ չարն ու կեղծաւորը դառն փշերով ճաղկող Մոլիէրներ. իսկ Քամօ-Մինար և ընկերութիւն թող դերան ետև կանգնին, մանաւանդ թէ դռնից էլ դուրս թող վռընդուին. դոքա դերասանի բաղդ փչացնող են։

Ա. Մ. Ե. Պ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք, որ Ս. Պետերբուրգից Վիէննայի «Presse» լրագրին հեռագրում են, թէ Ռուսաստանի մամուլին փոքր ինչ աւելի ազատութիւն կը տրվի և այդ խնդրի մասին ծրագիրը ծանր կերպով քննվում է այժմ մինիստրների խորհրդի մէջ։

—

«Порядокъ» լրագիրը իւր 137 համարում արտատպելով «Մշակից» մեր 79 համար առաջնորդող յօդուածի միտքը, իրանից աւելացնում է որ թէև դժուար կը լինի կովկասեցիների համար 3,000 վերստ հեռաւորութեամբ հրատարակվող մի լրագրի մէջ յայտնել իրանց պահանջները, բայց այնու ամենայնիւ մայրաքաղաքում հրատարակվող մի ռուսաց լրագիր, որ Կովկասի շահերին կը ծառայի, մեծ օգուտ կը բերի Կովկասին։

—

Ռուսաց զէմստվոները խնդիրք են ներկայացրել կառավարութեանը միջոցներ գործ դնել ռուս ժողովրդի հարբեցողութեանն առաջն առնելու համար։

—

Լրագիրներում կարդում ենք որ հայազգի երևելի նկարիչ Այվազովսկու պատկերների հանդէսը մեծ աջողութիւն է ունեցել Լոնդոնում։ Անգլիական մամուլը նրան եւրոպական մարինիստներից շատ բարձր է դասում։

—

Ս. Պետերբուրգից Մոսկվա տանող երկաթուղու գծի վրա այս օրերս մի կամուրջ այրվեցաւ։ Այդ էր պատճառը, երեի, որ մի օր մայրաքաղաքի փոստը չը ստացվեցաւ։ Այժմ լրագիրների խօսքերին նայելով երթևեկութիւնը գծի վրա վերականգնեցրած է։

—

Ռուսաց սրբազան Սինոդը նոր աղօթքներ է հրատարակել և տարածել ամբողջ Ռուսաստանում։ Այդ աղօթքների նպատակն է խնդրել Աստուծուն որ վերջ դնի Ռուսաստանի մէջ պատահող խռովութիւններին։

—

Մեզ խնդրում են յայտնել որ Թիֆլիսի Միջի-փողոցում գտնված Վասպուրականի հայոց վանքերին պատկանող չինութիւնը աւարված լինելով, ցանկացողներին վարձով է տրվում։ Դիմել կարելի է պ. Մոսթաֆեանի գրասենեակը, Շաղինովի քարվանսարայում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ

—

Միացեալ Ընկերութեանց մի կարևոր նիստը տեղի ունեցաւ կիւրակէ, Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին մէջ։ Ատեանը բացուելով ի ներկայութեան 33 երեսփոխանաց, նորընտիր նախագահ Տ. Առաքել Ալթուն-Տիւրքի մոտից ճառ մը արտասանեց, որ ծափահարութեամբ ընդունվեցաւ և ուղղի համար, որը ցանկանում է աշխարհումս մի բան լինել։—Կը ցանկաք խմտալ թէ մի մարդու գործը լուրջ և հաստատ գործ է թէ ոչ—նայէք թէ նա ինչ է ասում իր գործի տեղութեան վրա։ Վախենում է նա իր ինքն ըստ ինքեան ծանր գործի համար ժամանակ, փող, և աշխատանք գործադրել,—իմացէք որ այդ մարդը կամ բարոյապէս ցածր և կամ խելքով թեթև մարդ է։ Նոյնն է ազգային, որպէս նաև էական գործերի մէջ։ Երբէք մի հաւատաք մի տերունական ռուս մարդուն, որքան և մեծ անուն ունեցար նա, որը ձեզ կը ցանկար համոզեցնել, որ նա տասը տարում ամբողջ Ռուսաստանը երկաթուղիներով կը ծածկէ։

Վերջացնելով այս երկողը, կը ցանկանք մի անգամ ևս կրկնել մեր վերևի յիշած առաջարկութիւնը՝ ինչ մեզ այս բոպէիս պակաս է, այդ՝ Հայաստանի տնտեսութեան վերաբերեալ ճշգրիտ և լիակատար տեղեկութիւններ են։ Նախ և առաջ պիտի այս գործը առաջացնել, իսկ երբ այս ցանկութիւնը կատարված կը լինի, ես կարող եմ երդուել, որ Հայաստանի տնտեսութեան բարենորոգութեան համար աւելի պատրաստական միջոցներ կը գտնվեն, քան թէ մեր մամուլի առաջարկութիւնները մեզ այժմ կարող են ներկայացնել։

Սարասբուրգ Ա. Արասխանեանց

համար փողեր ժողովել, արդիւնաբերութեան համար անմիջապէս սերմեր բաժանել, բայսեր, արհեստներ մտցնել Հայաստանում և այլն, մեր կարծիքով առ այժմ անպտուղ կանցնեն։ Իւրաքանչիւր մեծ գործ պիտի հաստատ հիմք ունենայ նպատակին հասնելու համար, իսկ հաստատ հիմքը այս հարցի մէջ այն է, որ նախ և առաջ գիտենանք թէ ինչ է այն բանը, տնտեսական Հայաստանը, որի հետ մենք գործ պիտի սկսենք։

Պ. Նիկողոսեանի առաջարկութիւնից մենք ուրեմն համաձայնվում ենք մի այլ առաջարկութիւն չինել, որը մտքով առաջինի հետ սերտ կապակցութիւն ունէ, բայց որը զանազանվում է առաջնից իր աւելի գործնական, աւելի օգտակար բնաւորութեամբ։ Իսկ եթէ մեր խօսքը այլերուն ևս համոզեցուցիչ երևայ, կը ցանկանք մեր լրագիրների խորին ուշադրութիւնը սոյն կէտի վրա դարձնել։

Հարկաւոր է, որ Կ. Պոլսի ընկերութիւնների, որպէս նաև Թիֆլիզի և այլ քաղաքներում գոյութիւն ունեցող մեծ ընկերութիւնների միանուագ ոյժերով հետազօտվի Հայաստանի տնտեսական դրութիւնը. առաջարկութեամբ մեր լրագիրների ստորագրութիւններ բացել այն պարոնների համար, որոնք ցոյց կը տան ընդունակութիւն և սէր այդ ընկերութիւնների միջոցով Հայաստան գնալ, նրա հողը, բնակիչները, արուեստները, առևտուրը, արդիւնաբերութեան եղանակները, ժողովրդի դրութիւնը ուսումնասիրել, քննել հայերի իրար հետ և այլ ցեղերի հետ ունեցած ամենայն տեսակ յարաբերութիւնները։ Այդ բոլոր տեղեկութիւնները, գրած մօտագրաֆիաների ձեով, որոնք կըմբռնեն Հայաստանի ամբողջ անտեսական կեանքը, կը տրվեն ազգային միջոցներով։ Այո, այն ժամանակ, քաղաքագէտը, տնտեսագէտը, բանասաեղծը, և այլ մասնագէտներ և ազգային գործիչներ կարող են համարձակ, հիմնված այդ տեղեակ և բանի բուն անձերից գրած և լիակատար մօնոգրաֆիաների վրա, իրենց առաջարկութիւններն անել։ Այդ գործը կը լինի ճշմարիտ որ օգտաւէտ, որովհետև նա կը տայ օգտակար ուսումնասիրութիւնների լիառատ նիւթ. նա կը լինի օգտակար—մեր ազգային ինքնաճանաչութիւնը արթնեցնելով. օգտակար, որովհետև փոխանակ որ մենք օգնէն նիւթերից պլաններ չինենք, նա կը տայ մեզ դրական տեղեկութիւններ անժխտելի ճշմարտութեամբ։

Այս գործը կը դառնայ մինչև անգամ մի ազգային արձան, որի նշանակութիւնը երբէք չը պիտի ստոր դասել։

Ուսումնասիրէք եւրոպական կարգ ու կանոնի հետ, որոնք աւելի փորձված են քան թէ մենք և կը տեսնէք, որ իւրաքանչիւր ազգօգուտ հիմնարկութիւն կամ ձեռնարկութիւն սկսելուց առաջ, կանխաւ ծանօթանում են այն հարցի հետ մասնաժողովների և մասնագէտների միջոցով։ Ով չէ ուզում միայն գաղափարներով փայլել, այլ ուզում է դրական հետանք,—թող նա երբէք չը բաւականանայ միայն մտքով, գաղափարով, այլ աշխատէ այն բոլոր տեղեկութիւնները հաւաքել, որոնցից կախված պիտի լինի ենթադրած գործի աջողութիւնը։

Գիտէք ինչ է պատճառը, որ մեզանում մեծ բաներ երբէք չեն աջողվում։ Նրանից, որ մենք զգայուն ամէն գաղափարի, չունենք այն կարևոր հասկացողութիւնը, գիտելիքը նոյն իսկ այն գործի մասին, որին առաջացնելու համար բառեր և տաք տաք խոստումներ ենք շռայլում։ Մի գործ, որի մասին գեղեցիկ գաղափարներ ենք յայտնել և գործը իսկոյն սկսել, առանց այն բոլոր հանգամանքները կշռադատելու, առանց որոնց ենթադրութեան սկսած գործի ոչ շարունակութիւնը և ոչ նպատակը երևակայելի են, այդպիսի գործը կը գլորվի յաւիտենական անդունդը, երբ մանակցողների տաք տրամադրութիւնը սառչի, իսկ սկզբնական գաղափարը գոլորշիանայ։—Բայց մի գործ, որի մասին մենք ոչ թէ միայն բոպէական ոգեւորութիւն ենք ցոյց տուած, այլ ի նպաստ նրան մենք տարիներով թէ փող և թէ խելք և քրտինք ենք զոհած,—այդպիսի գործը կը մնայ միշտ մեզ մօտ, մեր սրտում և ինչ հակառակ ոյժ է հարկաւոր, որ կարողանայ խլել մեզնից այդ քրտինքի պտուղները, որոնց հետ մեր յոյսերը ամենանեղ կերպով կապած կը լինեն։

Աշխատանքի մեծ գաղտնիքը դրա մէջն է. չը կայ երկարատև մի հիմնարկութիւն, որը միակ մի ցանկութեան անմիջական պտուղ լինէր, այլ միշտ քրտնալի աշխատանքի պտուղ է նա։ Իսկ այս գործը—Հայաստանի տնտեսական դրութիւնը վերականգնել կամ բարենորոգել,—այդ ոչ թէ մի հասարակ ձեռնարկութիւն է, այլ մի հիմնարկութեան արդիւնք երկար տարիների համար հաշված։—Ով խոյս է տալիս ազգային հարցերի վրա խօսելիս, երկարամեայ աշխատանքի ենթադրութիւնից,—նա չարժէ ազգային գործիչի ազնիւ կոչման. այդպիսի վարմունքը անարժան է մի ազգի համար, որը ցանկանում է աշխարհումս մի բան լինել։—Կը ցանկաք խմտալ թէ մի մարդու գործը լուրջ և հաստատ գործ է թէ ոչ—նայէք թէ նա ինչ է ասում իր գործի տեղութեան վրա։ Վախենում է նա իր ինքն ըստ ինքեան ծանր գործի համար ժամանակ, փող, և աշխատանք գործադրել,—իմացէք որ այդ մարդը կամ բարոյապէս ցածր և կամ խելքով թեթև մարդ է։ Նոյնն է ազգային, որպէս նաև էական գործերի մէջ։ Երբէք մի հաւատաք մի տերունական ռուս մարդուն, որքան և մեծ անուն ունեցար նա, որը ձեզ կը ցանկար համոզեցնել, որ նա տասը տարում ամբողջ Ռուսաստանը երկաթուղիներով կը ծածկէ։

Վերջացնելով այս երկողը, կը ցանկանք մի անգամ ևս կրկնել մեր վերևի յիշած առաջարկութիւնը՝ ինչ մեզ այս բոպէիս պակաս է, այդ՝ Հայաստանի տնտեսութեան վերաբերեալ ճշգրիտ և լիակատար տեղեկութիւններ են։ Նախ և առաջ պիտի այս գործը առաջացնել, իսկ երբ այս ցանկութիւնը կատարված կը լինի, ես կարող եմ երդուել, որ Հայաստանի տնտեսութեան բարենորոգութեան համար աւելի պատրաստական միջոցներ կը գտնվեն, քան թէ մեր մամուլի առաջարկութիւնները մեզ այժմ կարող են ներկայացնել։

Սարասբուրգ Ա. Արասխանեանց

րոյ ապագրութիւնն որոշուեցաւ միաձայն հաւանութեամբ։ Յետոյ Տնօրէն Ժողովոյ Նորընտիր Ատենապետ Տ. Տոքթ. Փէշտիմալճեան արտասանեց ճառ մը, ուր յայտնեց թէ չը պիտի կարենայ ստանձնել իւր պաշտօնը մինչև որ Ժողովը յանձն չառնու բարեփոխել իւր Նպատակը, Հայաստանի և Կիլիկիոյ ազգայնոց կրթական վիճակին հետ տնտեսական վիճակն ալ բարւոքելու ձեռնարկելով։ Երկար վիճաբանութիւններէ յետոյ, այս առաջարկը մերժուեցաւ ոմանց կողմէ իբր կանխահաս և ոմանց կողմէ իբր հակառակ հիմնական կանոնագրին։ Փէշտիմալճեան էֆէնդի հրաժարական տալով իսկոյն, Ժողովը ձեռնարկեց նոր Ատենապետի մը ընտրութեան։ Առաջին անգամուն, Տեարք Յարութիւն Նորատունկեան և Մինաս Չերազ հաւասար քուէ ստացան. քուէարկութիւնը կրկնուելով, Տ. Չերազ ստացաւ 18 քուէ և Տ. Նորատունկեան 14 քուէ. ուստի, կանոնագրին տրամադրած 3/4-ի քըւէն գոյացնելու համար՝ հարկ եղաւ ընտրութիւնը յառաջիկայ նստին յետաձգել, որ տեղի պիտի ունենայ կիւրակէ։

Ահա Տ. Տոքթ. Փէշտիմալճեանի նկատողութեան արժանի ճառն.

„Տեարք Երեսփոխանք։ Միացեալ Ընկերութեանց Երեսփոխանական Ժողովդ իւր Տնօրէն Ժողովոյն ատենապետութեան պաշտօնն կուզէ յանձնել ինձ։ Շնորհակալ եմ յոյժ ձեր առ իս ցոյց ուած վստահութեան համար։

Ներեցէք սակայն որ նոր Տնօրէն Ժողովն կազմող անդամոց անուններն պաշտօնապէս ձեզ չը ծանուցած, մի կարևոր առաջարկութիւն առնեմ, որոյ ընդունելութենէն կախեալ է նախ իմ պաշտօնավարութիւնս։

Յարուցանելու խնդիրս ամենակարևոր է ինձ համար։ Առանց շրջասացութեան և համառօտ կերպիւ հարկ է որ յայտնեմ զայն։

Առաջին անգամն է որ կը ներկայանամ Ժողովդդ։ Կը սխալիմ արդեօք երբ կենթադրեմ թէ նոքա, որք պատուասիրեցին զիս իրենց քուէներով, տեղեակ էին Միացեալ Ընկերութեանց նկատմամբ ունեցած կարծիքս։ Ձեր մէջէն նոքա որք խօսակից եղել էին ինձ ընկերութեան ընթացքին վերայ, և նոքա որք առիթ ունեցել էին կարդալ հրապարակաւ յայտնած ինչ ինչ դիտողութիւնքս ընկերութեան նպատակին նկատմամբ, քաջ գիտեն թէ ես կատարեալապէս համոզուած եմ թէ Միացեալ Ընկերութիւնն իւր այժմեան ուղղութեանց մէջ մնալով, որչափ և նորա նպատակն գովելի լինի, որչափ և ժրաջան լինին նորա գործողքն և հասարակութիւնն առատաձեռն, չէ կարող հզօրապէս օգնել մեր գաւառացի ազգայնոց թշուառ վիճակին։

Միացեալ Ընկերութիւնն ուրիշ ընկերութեանց պէս չէ որ մի մասնաւոր և սահմանափակ նպատակաւ աշխատի։ Սա բովանդակ Ազգին ընկերութիւնն է, յորմէ Ազգն իրաւունք ունի մեծ բարիքներ ակընկալել, նոյն իսկ նորա համազգային լինելուն պատճառաւ։ Ես կը կարծեմ թէ սա առաջին օրէն ճանապարհ եղած է և կը գործէ ցարդ, առանց կանխապէս ուսումնասիրած լինելու մեր գաւառացի ազգայնոց էական և անմիջական պէտքերն։

Ըստ իս, սոսկ մտաւորական կրթութիւնն չէ այս ժամուս Փոքր Ասիոյ ազգայնոց անհրաժեշտ պէտքն, և թէ որ Միացեալ Ընկերութիւնն մի միայն իւր ներկայ ուղղութեանն մէջ յարատեւէ, ազգին մի մասն դեռ երկար տեսներ խաբեպատիր յոյսերով սնուցած պիտի լինի, և Ազգն տեսնելով մի օր որ ընկերութիւնն չը գոյացներ ինչ որ կը խոստանար, գուցէ մի մահաբեր անտարբերութիւն պիտի յղանայ նորա մասին, եթէ արդէն ընկերութեան անձուկ վիճակն այդ անտարբերութեան սկզբնաւորութենէն յառաջ չէ եկել։

Պէտք է որ Միացեալ Ընկերութիւնն հուսկ ուրեմն ըմբռնէ այն ընդհանրացած ճշմարտութիւնն թէ ազգին մտաւորական զարգացումն նիւթական զարգացման հետևանքն միայն կարէ լինիլ, և թէ այս վերջինն պէտք է, ամեն բանէ յառաջ, իւր ուշադրութիւնն գրաւել։

Իմ համոզումս է թէ մենք խիստ տկար մի նեցուկ ընծայած կը լինիմք ազգայնոց՝ եթէ լոկ դպրոցներ բանամք նոցա և դասագրքեր յղեմք։ Հայաստանի և Կիլիկիոյ հայք սովատանջ են կամ աղքատ։ Նոքա ոգէտ են իւրեանց աշխատութիւնն առաւել արդասաւոր առնելոյ մասին։ Նոքա գրքէ յառաջ հացի պէտք ունին և գիտութենէ յառաջ արհեստի։

Արդ՝ նկատելով որ Ազգն ամեն ժամանակ գործնական միջոցներով հաստատել է իւր գոյութիւն, նկատելով որ մերօրեայ յիսնամեայ կեանքն իսկ մեծ ապացոյց է այս ազգային ձգման. նկատելով միանգամայն որ ընկերութիւնս, չը կատարելով ինչ որ պէտք է կատարել այս հակման նպաստելու համար, մեծ պատասխանատուութեան ներքև պիտի ընկնի ապագային առջև, անհրաժեշտ կը թուի ինձ որ Միացեալ Ընկերութիւնն բարեփոխէ իւր ուղղութիւնն և իւրեան նպատակ առնու նա՛խ փոքր Ասիոյ հայոց անտեսական դրութիւնն բարւոքել։

Գիտէք արդէն թէ Ազգն, յորմէ կը սպասեմք ամեն նպաստ, չը գիտեր ընդհանրապէս վերացական գաղափարներով շատանալ, և մեծաւ մասամբ այդ ուղղութիւնն պայման իսկ կը գտնէ իւր բարոյական և նիւթական աջակցութիւնն նուիրելու համար ընկերութեանս։

Իրաց այս վիճակի մէջ պարտք կը համարիմ ինձ յայտարարել թէ ես ևս պայման կը գտնեմ ձեզ ընդունիլ այս կանոնադրական բարեփոխումն, եթէ կուզէք որ առանց իմ համոզմունքս բռնաբարելու կարենամ ստանձնել Տնօրէն Ժողովոյ ատենապետութեան պաշտօնն։ Այս թէ ոչ, ազգային իրական շահուց մասին ունեցած գաղափարներս պիտի մղեն զիս ոչ միայն չընդունիլ այդ լոկ կրթական պաշտօնն, այլ և գտնել մի այնպիսի ընկերութիւն որ համապատասխանէ Փոքր Ասիոյ տեղական պիտոյից։

Կառաջարկեմ։ Բարեփոխել հիմնական կանոնագրին ճակատն արձանագրուած տողն և ասել.

„Նպատակ. — Հայաստանի և Կիլիկիոյ հայոց տնտեսական բարւոքմանն նպաստել և նոցա մէջ նախնական ուսումն ծաւալել“։

(Մասիս)

ԳԵՐՄԱՆԻԱ

Բերլինի մէջ հրատարակվող ազատամիտ լրագիրները պատերազմում են Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի մէջ կապված առևտրական դաշնագրութիւնը։ „National Zeitung“ լրագիրը այդ դաշնագրութիւնը մի նոր ապացոյց է համարում, որ իշխան Բիսմարկի քաղաքականութիւնը կարող է միայն դժուարութիւններ ծագեցնել Գերմանիայի առևտրական յարաբերութիւնների համար։ Միւս կողմից այդ դաշնագրութիւնը Վիէննայի մէջ էլ անբաւականութիւն պատճառեց։ Աւստրօ-Ունգարական լրագիրների մեծամասնութիւնը պատերազմում է այդ դաշնագրութիւնը, ասելով, թէ նա բոլորովին չէ բարւոքում Գերմանիայի և Աւստրիայի առևտրական յարաբերութիւնները։

Ֆրանսիական պատգամաւորների ժողովից ընդունված ընտրողական ձևի մասին իշխան Բիսմարկ նկատել է, որ նա շատ ձեռնտու կը լինի կղերական կուսակցութեանը։ Բիսմարկի կարծիքով այդ ձևից ոչ մի կուսակցութիւն այնքան օգուտ չէ կարող քաղել որքան կղերականները, որովհետև նրանց քահանաները մուտք ունեն գրեթէ իւրաքանչիւր ընտանիքի մէջ։ Բացի այդ բօնապարտեականները այդ ձևի շնորհիւ մի քանի նահանգների մէջ մեծ աջողութիւն կունենան։ „Ժամանակը ցոյց կը տայ, ասել է իշխան Բիսմարկ, թէ կղերական կուսակցութիւնը Ֆրանսիայի մէջ որքան մեծ է։

Գերմանական պարլամենտի նիստերը մի քանի օրով յետաձգված են։ Պարլամենտական նոր աշխատանքները կը տևեն մինչև յունիսի վերջը, որովհետև մի քանի նշանաւոր հարցեր պէտք է քննվեն։

ՍՊԱՆԻԱ

Մադրիդից լրագիրներին հաղորդում են։ Սպանիական թագաւորը ներկայ էր ճարտարապետների ժողովին, որի բացման ժամանակ ասաց, թէ նա պատրաստ է օգնել ժողովին նրա նպատակները իրագործելու համար և այն ամեն բանին, որ կը նպաստի սպանիական ժողովրդի բաղդաւորութեանը, լուսաւորութեանը և բարօրութեանը։ Այդ ճառը ներկայ եղողների կողմից մեծ համակրութեամբ ընդունվեցաւ։

Մայիսի 24-ին հանդիսով բացվեցաւ Կալդերօնի արձանը։ Այդ օրը թէ ձիաքարշ երկաթուղիների և թէ կառքերի շարժողութիւնը ընդհատված էր, որովհետև փողոցները ամբոխով լիքն էին։ Մօտ 130,000 օտարականներ հասել էին Մադրիդ արտասահմանից և նահանգական քաղաքներից։ Ամբողջ Մադրիդը զարդարված էր ծաղիկներով և ազգային դրօշակներով։

Ուսանողների ահագին բազմութիւն, դրօշակներ և պսակներ առնելով, անցաւ քաղաքից և ուղևորվեցաւ դէպի Կալդերօնի արձանը։ Ուսանողները կանգնեցին այն հիւրանոցի առաջն, որտեղ իջել էր Փարիզի քաղաքային խորհրդարանի նախագահը և յայտնեցին նրան իրանց համակրութիւնը։

ԹԻՒՐՔԻԱ

Լրագիրները հաղորդում են հետևեալը։ Յոյն-թիւրքական հարցը, իր վրա դարձնելով քաղաքագէտների ուշադրութիւնը, մոռացութեան տուեց թիւրք-չերնոգօրիական խնդրի մի քանի կէտերը, որոնք մինչև այժմ անվճիռ են մնացած։ Այժմ Բ. Դրան առաջարկութեան համեմատ նրանք երևի շուտով կը վճռվին։ „Neue Freie Presse“ լրագիրը հաղորդում է, որ ռուսաց կառավարութիւնը այդ հարցի վերաբերութեամբ բաւական զիջումներ է արել։ Նա յանձնել է իր դեսպանին Վիէննայում, պ. Նովիկովին, յայտնել միւս դեսպաններին, թէ Ռուսաստանը պատրաստ է համաձայնել, որ փոփոխվեն Թիւրքիայի և Չերնոգօրիայի սահմանները այնպէս, ինչպէս առաջարկել է անգլիական կառավարութիւնը, եթէ բոլոր պետութիւնները այդ կը ցանկան և Թիւրքիան կը պարտաւորվի այլ ևս սահմանական փոփոխութիւններ չը պահանջել։

Բ. Դուռը մտադիր է վերջացնել վիճելի բոլոր հարցերը, որպէս զի կարողանայ ըղբաղվել ներքին գործերով։

Միհադ-փաշա հասել է Կ. Պոլիս և գտնվում է պատուաւոր պահապանների հսկողութեան տակ։

Մակեդոնիայի մէջ աւազակներից գերի վերցրած անգլիացի Սօսեր ազատված է և հասել է Սալոնիկ։ Դեռ յայտնի չէ, թէ նրան ազատելու համար աւազակները որքան փող են ստացել։ Սալոնիկի շրջակաների մէջ թիւրք աւազակները գերի են վերցրել մի հարուստ թիւրք կալուածատերի, որի ազատութեան համար պահանջում են 6,000 ֆունտ ստերլինգ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Տէրութեան հաղորդութիւն։ Կայսերական տէրութեան լուութիւնը Բոլգարիայում պատահած փոփոխութեան մասին, միջոց տուեց ազիտատօրներին պնդել իբր թէ կայսերական կաբինէտը, հաւանութիւն չէ տալիս Բոլգարիայի իշխանի որոշումներին։ Այդ աչքի առաջ ունենալով, անհրաժեշտ է համարում կաբինէտը յայտնել, որ իշխանը էր և է Բոլգարական ազգի ընտրեալը, որ համակրութեամբ էր ընդունված անմոռանալի Կայսր-Ազատողի և ամբողջ Ռուսաստանի կողմից, և ճանաչված էր ամբողջ Եւրոպայից։ Իշխանը մարմնացնում է անխզելի կապ ռուս ժողովրդի բոլգարականի հետ։ Կայսրը հաւատում է իշխանի բարձր զգացմունքներին և ազնուութեանը և չէ կասկածում որ նա չի յետ կանգնի իր յանձն առած պարտաւորութիւններից առաջնորդել բոլգարական ազգը զարգացման ճանապարհով։ Կայսերական տէրութիւնը հաւատացած է, որ իշխանը, յայտնելով անկարողութիւն կատարել պարտաւորութիւնները ներկայ ժամանակում գոյութիւն ունեցող պայմաններում, ձեռնարկվում էր խոր համոզմունքով, որ չէր կարող կատարել իր պարտքը, շարունակելով յանձն առնել գործերի դրութեան պատասխանատուութիւնը, որ սպառնում էր Բոլգարիայի ապագային, հաւատացած է, նոյնպէս, որ իշխանը պահանջեց անհրաժեշտ իշխանութիւնը, իր պարտաւորութեան խղճմտաւոր կատարման համար։ Ահա ինչ պատճառով կայսերական կառավարութիւնը հաւատալով իշխանի խօսքերին, միաց հաւատարմութեամբ կապված նրա հետ, մերժելով ազիտատօրների դրդումները, որոնք ձգտում են խզել այդ կապը, վտանգի մէջ դնելով անարխիա յարուցանելու։ Բոլգարները չը պէտք տարակուսեն այն զգացմունքների մասին որ թագաւորը և ամբողջ Ռուսաստանը հաստատ պահում են նրանց վերաբերութեամբ, նրանք պէտք է հաւատացած լինեն, որ այդ ցանկութիւնները թելադրված են նրանց բարեկեցութեան մասին մշտական հոգսերով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Բարձրագոյն վարձատրութիւններ։ Կովկասեան շրջանի արտիլերիայի մեծաւոր գեներալ Սօֆիանոին շնորհված է Ալէքսանդր-Նէվսկու շքանշանը, տեղական զօրքերի գլխաւորին, գեներալ Դէվէլին՝ Սպիտակ-Արծուի շքանշանը, Կովկասեան զօրքի մօտ ծառայող Միրխելեվիչին՝ Վլադիմիր երկրորդ աստիճանի պատուանշանը։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԽԱԽՈՏԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Կովկաս հիւրանոցի տակը, Երեվանեան հրապարակի վերայ ստացված է

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՈԼԻՑ

Իսկական Տաճկաստանի ծխախոտ նոր կոտորած

Սամսօն և Կէօրէք

որ գերազանցում է թէ համով և թէ արմատով

3—3 (2)

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ ծախվում է արտասահմանի շօպանդիական **ՑԵՄԵՆՏ** փօթիի մէջ էլիսբար **ԲԱԲԱԼՕՎԻ** մօտ, քուԹայիսի մէջ **ԿՈՒՐՑՕՎԻ** մօտ։ Նոյնպէս ծախվում են չափաւոր գներով **ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱՄՈՄԵՐ** սեփական գործարանից, **ԹԻՖԼԻՍՈՒՄ** Սիօնսկայա փողոցի վրա, **ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ** և **ԳՕՐԻՈՒՄ**։

ԻՎԱՆ ԿՈՒՐՑՕՎ.

5—11 (2)

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան, խմբագիր „Աշխատանք“ լրագրի, պատրաստում է Թիֆլիսի բէալական և կլասիք ուսումնարանների համար ուսանողներ, տալիս է առանձնապէս դասեր մաթեմատիքայի, երկակի իտալական հաշուեգիտութեան, անատոմիայի, ֆրանսիարէն, ռուս և հայ լեզուների և այլն։ Պատրաստ է նոյնպէս տեսչական կամ ուսուցչական պաշտօնով գնալ հայ գաւառ։ Պայմանները ուսումնարանական վարչութիւնք և մասնաւոր անձինք բարեհաճեն ուղղել այս հասցէով. Тифлисъ, въ табачный магазинъ Теръ-Осипова подъ гостинницею *Кавказъ*, или же: въ типографію Моссеса Вартаніанъ, редактору газеты *Трудъ*.

2—3

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից։ Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկոյ։

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց

Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զիջումն կը լինի։ Մեր հասցէն՝ Въ Эривань

А. Гуламирянцу

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով 'ի լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրութեամբ „Ծաղկաքաղ ձայնագրեալ երգարան.“ ուստի խնդրում եմ ձայնագրագէտներին և այն պարոններին, որոց մօտ գտանվում են ազգային երգեր թէ հայկական և թէ եւրոպական ձայնագրութեամբ (նօտաներով) բարեհաճել մինչև յառաջակայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ։ Երգեր ուղարկողների ազգանունները կը տպագրուին երգարանի վերջը և միմի օրինակ էլ ձրիապէս կը ստանան։ Վարձատրութիւն պահանջողները ևս կարող են իրանց պայմանները յայտնել։ Իմ հասցէն։ Տփխիս, Եղնիկ քահանայի երդնկեանց։ 2—10

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

Մայիսի	22 և 23-ին		Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
„	25-ից—30-ը		Հալլաբարի Մարիամեան օր. ուսումն.
„	28 և 29-ին		Կուկիու Թանդոյեան օր. ուսումն.
„	30-ին	„	Հալլաբարի Ս. Մինաս եկ. ուսումն.
Յունիսի	1 և 2-ին		Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
„	3 և 4-ին		Զղլաշէն եկ. ուսումնարաններում.
„	5-ին	„	Շամքոռեցոց եկ. ուսումնարանում.
„	6-ին	„	Զորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
„	8-ին	„	Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
„	9-ին	„	Զուղուբէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.

Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն՝ **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական բէվօլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաչօկոլադի ծախելու համար, որոնք վարիկի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կոնֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը։

81—100

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՎԻԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատօլիկոց փողոցի անկիւնում Միքայէլ Տէր-Նիկողոսեանի պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

8—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ԲԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** անունով վիպասանութիւնը։ Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը։ ԲԱԳՈՒ՝ պ. Ալէքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժվելու մարմնամարզութեան սրախաղութեան (фехтованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տված զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը։

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւնից արդէն հաստատված է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին։

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ դրվել և տարեկան 10 ռուբլի վճարել կարելի է։

1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեպարտամենտում, կարլ Կարլովիչ Կեստերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցերեկվայ։

2) Վիկտոր Ալէքսանդրովիչ Դինգելշտեդտի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամամշևի տանը, Սօլդատսկի բազարի վրա։

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ։

4) Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Բրունսի մօտ։ Միխայելովսկայա փողոցի վրա, ռուսական մագազինում։

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրօնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազինները։

Գինն է **1** ռուբլ **20** կոպ.։

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՊՐԱՍԵՆԱԿԻ ՄԷՋ, Երևանսկայա հրապարակի վրա, Չակելու տանը բացված է սառագրութիւն յօգուտ 'ի Տէր Հանդուցեալ Կայսր Ալէքսանդր II-ի **ՈՐԲԱՆՈՑԻ**, որ բացվելու է Թիֆլիսի մէջ։

9—15

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կոնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, պլքամներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիկո, պարուսին, թաշկինակներ, երեսբրիչներ, կլեօնկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն։ Թէց մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մագնեզիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԹԻՆԱՑԻ գինի ջերմի դէմ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վաներկօզատի համար, պարսկական փոշի։ 4—100

ՄԵԺԵՎՕԻ ԻՆԺԵՆԵՐ ՍԷՐԳԷՅ ԻՎԱՆՕՎԻՉ ԲԱԳԱՏՈՒՐՕՎ ընդունում է. կազմել ՑԱՏԱԿԱԳԾԵՐ (պլաններ), գծագիրներ, պրոֆիլներ, կատարում է կալուածների, հողերի և անտառների բաժանումն գնահատողական գիտական հիմունքների վրա, կատարում է ընդօրինակումներ (съемки) և հարթաչափութիւններ (нивеллировка) ԲԱԺԱՆՈՒՄ Է ԱՆՏԱՌՆԵՐԸ կանոնաւորապէս գործածելու համար, գնահատում է հողերը, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ է տալիս երկրաչափական և կալուածական գործերի վերաբերութեամբ և մի և նոյն ժամանակ կալուածական գործերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանական, տեխնիկական և տնտեսական կողմերից, պատրաստ է որ և է հիմնարկութեան հաւատարմատար լինել կալուածական և երկրաչափական գործերի համար։ ՀԱՍՑԷՆ և ՊԱՏՄԱՆՆԵՐԸ թողնել „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։

1—10

Дозволено цензурою, Тифлисъ. 28 Мая 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.